13. Թալինի Մայր եկեղեցու արձանագրութեան մի կտոր 851 թուականի, որ էջմիածին է բերել Տ. Խաչիկ Ծ. վարդապետը։ Քարի մեծութիւնը 54×16 սմ. է և մեր նկարը 13×10½ սմ։

1· ՅԾ թվակա··
2· յ՞այ Աշոտի ը··
3· նի եւ ազատե··
4· իւր հոգեց եւ վ··
5· րոթեն մա··

Երկրորդ տող. «յ՞այ» կրճատ։ «Աշոտի» բառի մէջ շ անսովոր ձևով, բոլորաձև մասը շրջած հակառակ կողմը։

14. Ագարակ գիւղի եկեղեցու գերեզմանատանը Սահակ իրիցորդոյ տապանի արձանագրութիւնը 941 թուականից. նկարուած է միայն արձանագրութեան մի մասը, քարի հարաւային կողի վերայ, որպէս օրինակ անվարժ արձանագրական գրչութեան։ Գերեզմանը օրօրոցաձև է, մի աստիճանի պատուանդանով, որ նոյն քարի մասն է։ Երկրորդ տողի մէջ ան փչացած։

Այս է հանգիստ··· (ողնաշարի վերայ) |
Դէ Սահակ իրիցորդոյ |
թվական ՅՂ·

15. Տեկորի գերեզմանատան խաչքար 964 թուի, որ հետաքրքրական է գրի անսովոր և շեղագրին մօտեցող ձևերով։ Հարցականով նշանակուած տառն անընթեռնելի։

+ թ։ ՆԺԳ·
+ ես ?ա|տապ ծառա այ որ | կագնեց|ի
զխաչս | զայս

16. Վայոց Ձորի Խոտակերաց կամ Քարկոփի վանքի արձանագրութիւնը 910 թ.։ Տարաբաղդաբար արձանագրութիւնը շատ է խանդարուած, և տեղն ու տեղը ժամանակի սղութեան պատճառով հնարաւորութիւն չունեցանք վերծանելու. հետաքրքրուողները կարող են ի նկատի ունենալ Օրբէլեան. Ա. Փարիզ. եր. 582 և Ալիշան. Սիսական եր. 169։ Վերարտադրութիւնը աղօտ է, ինչպէս իսկականը, բայց հետաքրքրական է իրրև միակ արձանագրութիւն, որ փորագրուած չէ, այլ գծերով միայն ծրուած։

17. Գրիգոր Համզէ Պահլաւունու արձանագրութիւնը Ժ. դարու երկրորդ կիսում, Անիի Ապուղամրենց Ս. Գրիգորի արևելեան պատին։ Ա-ի այս ձևը Ժ. դարից յետոյ չի կրկնուում։